Ալեքսանդր Ծատուրյան

Ալիշանի մահը

Բա՛ց քո գիրկը լո՜ւյս օթևանդ սրբազան,
Հայր գրքառատ ողորմած
Քե՛զ է գալիս հայ աշխարհի մեծ գուսան.
Ազգի սիրով պրսակված:

Ջերմ սիրահար հեգ հայրենի աշխարհի,
Բեղուն մըշակ գիտության
Սերմնացան էր նա անձանձիր, քաջարի,
Գրլխին ալիք ծերության:

Ավարայրի խոսնակ բլբուլ տրխրաշունչ,
Հայ գարունքին կարոտած.
Նա երգում էր հայի մորմոք ու մրրմունջ,
Հայի փառքը կորուսած…

Նա երգում էր, նա պատմում էր աշխարհին
Հարաչարչար հայ կյանքի
Տրխուր վեպը - հայ վիճակը նոր ու հին,
Հայի խաչը տանջանքի…

Բա՛ց քո գիրկը, հա՛յր գրքառատ, ողորմած
Հյո՜ւր է գալիս քեզ հավետ
Հայի սրրտում լույս-անունով սրրբացած

Ազգի զուսան-Նահապետ: